

է անվաւերականի մը (Apocryphe) ուրիշ գրուագը. Եղիսարեթ՝ իր զաւակը մանկակոտոր Հերովդէսի զինուորներէն ազատելու համար, կը փախչի լերան կողմերը եւ ժամանակ մը կը մնայ քսութան մէջ. Ան կ'աղօթէ Աստուծոյ ու կ'ըսէ « . . . բացցէ երկիր հրամանաւ քո տէր եւ կյցէ զմայրս հանդերձ մանկամբս իմով եւ մ'ի հայեացին աչք իմ տեսանել զմահ որդւոյ իմոյ: Եւ զայս ասացեալ նորա առժամայն պատառեցաւ լեռոն եւ ընկալաւ զնա հանդերձ մանկամբ եւ կամարածեւ ծածկեաց զնոսա լեռոն», (Մանկութեան Աւետարան, ՁԵՌ. Ս. Աթոռոյ մտաւնադարանին, թիւ 1432): Աւետարանին այս յիշատակներով ու գեղարուած, հին դարերուն, հայ բարեպաշտութիւնը հոյակապօրէն կառուցած է Այնքեարիմի եկեղեցին ու վանքը. բայց զիտելի պարագայ մըն է որ եկեղեցաշէն մեր նախնիք, Ս. Երկրին մէջ, իրենց ներշնչարան ընտրած են ո՛չ միայն վաւերական Աւետարանաց գրուագները, այլ նաև օգտուած են անվաւեր գրուածքներու շինիչ և օգտակար պատմուածքներէն, մասնաւորապէս եկեղեցեաց շինութիւններու առթիւ, անխտիր ազդուած են նոյն գիրքէն, և այս կերպով, Երուսաղէմի և Նշնակայից մէջ բարեպաշտօրէն կառուցած են Յովակիմ-Աննայի, Գարիգոնայի Ս. Կուսիկ եւ Այնկեարիկի մեծածախս եկեղեցիները. նոյն իսկ մեր եկեղեցւոյ վարդապետներէն ոմանք իրենց մեկնողական գրուածոց մէջ աչքէ հեռի չեն պահած հայերէնի թարգմանուած անվաւերականները, (տեսնել այս մասին մեր յօդուածը «Հայ Սօսնակ», 1925, էջ 110): Այնքեարիմի հայ հաստատութեանց ծագումը շատ հին է, ինչպէս յետոյ պիտի տեսնենք. հնախօսութեան հայթայթած ապացոյցները մեզի պիտի համոզեն թէ անոնք շինուած են նոյն իսկ Դ. դարուն վերջերը: Վերոյիշեալ Յով. Մարթա կանոնիկոսն է դարձեալ որ իր մէկ գրուածքին մէջ (Անդ. էջ 128-127), իբր ապացոյց նոյն եկեղեցւոյ հնութեան, մէջ կը բերէ Դ. դարուն, Սեբաստիոյ Պետրոս եպիսկոպոսին մէկ ճառը ընդդէմ Եւնոմիոսի, և, ի մէջ այլ ապացոյցներու, կը յիշէ այն տեղերը, որ, ըստ Աւետարանի, վիաները եղան Քրիստոսի զօրութեան և աստուածային առաքելութեան, և այդ տեղերը քրիստոնեայք սրբազան յիշատակներով զարդարած են: Նազարէթի Աւեսնակ եկեղեցիէն յետոյ կը յիշէ Զաքարիայի եկեղեցին, Երուսաղէմի մօտերը, ի յիշատակ Ս. Կու-